

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՇՆՈՐՀԱՁԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. ՄԱՀԱԿԱՅ, ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻԱՆ Տանն Աղթամարայ, Պատրիարքութեան Ս. Երուսաղէմի Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի հայոց Թուրքիոյ, Գերաշնորհ Արքեպիսկոպոսաց, Գերապատիւ Առաջնորդաց և Եպիսկոպոսաց, Հոգեշնորհ Փոխանորդաց, [illegible] Ժողովականաց և վանահարց, և միաբանական ուխտից, [illegible] Հայոց կուսակաց, շնորհուն սարկաւագաց և զրկաց տնմարկեալ հանկոյց եկեղեցւոյ, բարեջան երեսփոխանաց և անդամոց կրթական, բարեգործական, կուլտուրական, արհեստագիտական, որբանոցաց և այլ ամենայն Աստուածաճաճոյ հաստատութեանց, ընկերութեանց և միութեանց, ժրաջան հոգաբարձուաց և ուսուցչաց, յոգնեռանդն վաստակաւորաց ի գրական աշխատութիւնս, ջանասէր մանկանց երիտասարդաց, աշխատասէր վաճառականաց և արհեստաւորաց, քրիստոնէր երկրագործաց և շինականաց և առհասարակ ընդհանուր հաւատացելոց հայկազեան սեռի արանց և կանանց, ծերոց և տղայոց, մեծի և փոքրու, ձեզ, որք ի մայրենի երկրի բնակիալք և որք ի տար աշխարհս սփռեալք սահեալք նեղութեամբ, և որք ի մէջ այլալեզու և այլակրօն ազանց տարագրեալք, ողջոյն սիրոյ և խաղաղութեան հասցէ ի Միածնէէ և փրկական Ս. Կաթուղիկէէս և ի Ս. Լուսաւորչին մերոյ Աջոյս։

ԱՂ ՈՐՊԷՍ ԿԱՄԻՆ ՄԱՐԴԻԿ ԱՅՆՊԷՍ ԱՌՆԷ ՏԷՐ, ԱՅԼ ՈՐՊԷՍ Ինքն կամի. և ո՞ կարէ հասու լինել անքննին խորհրդոց նորա։

Մինչ պատանի էի եւ ուսանիի ի պետական դպրանոցի, զայն Տեառն կոչեաց զիս ի սպասաւորութիւն Տանն Իւրոյ, քառասուն և չորք ամք են, յորմէ հետէ որպէս սպասաւոր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կատարեալ զգէսպէս պաշտամունս ըստ կոչմանս և ըստ ասացեալսն և արաւէլք զօտան հաւատացեալն ի Մեզ։ Երկիցս հաճոյ եղև Տեառն կարգել զՄեզ աւանդաւոր կարգաց և զրութեանց Ս. Եկեղեցւոյս յետ մահուան հոգելոյս և երջանկայիշատակ Հայրապետացն Տ. Տ. Մկրտչի Ա. և Մատթէոսի Բ. Եւ մինչ կատարէաք զի վերայ Մեր եդեալ զպարտս, ըստ չափու կարեաց Մերոց, կամ եղև Տեառն յերեքտասաներորդի զեկտեմբերի անցելոյ ամի ի ձեռն Համազգային Ժողովոյն կոչել զՄեզ յԱթոռ սրբոյ առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի և յառաջնորդում աւուր յուլիսի ամսոյ ներկայ ամի ընկալաք զօծումն Հայրապետական ի Միածնէէ Կաթուղիկէ Մայր Տաճարի։ Ուստարհալ առաջի կամաց Հօրն Երկնաւորի և պատկառ կացեալ համազգային ընտրութեան, զամբ ի վճարել զի վերայ Մեր եդեալ զբրբազան պարտս առ եկեղեցին Հայաստանեայց և առ ազգն հայոց։

Սարսեմբ եւ զարհուրիմբ ի ցնոռ ահեղ բանի՞ օն ծանր են պարտք, բազմադիմի հոգք Հայրապետի ամենայն Հայոց։ Սակայն յիշելով զանն աւետարանական, զպատուիրանն Փրկչին մերոյ, եթէ լուծն Նորա քաղցր է և բեռն փոքրագի, նաև ունելով առաջի աչաց զի ի պաշտաման Մերում չեմք միայնակ, այլ ունիմք լծակից Մեզ զՇնորհաշաւորդ եղբայրն Մեր զԱթոռակալն Տանն Կիլիկիոյ, զամենապատիւ Պատրիարքն Հայոց Երուսաղէմի և Կ. Պոլսոյ, զԱռաջնորդս և զբրբազուսք Միաբանութիւն Մայր Աթոռոյս, զՊաշտօնատարս [illegible] զարչական, կրթական և ազգասիրական հաստատութեանց մերոց, քաջալերիմք և հաւատամք, եթէ օգնականութիւնք եղբարց և զուակաց Մերոց կարիմք լցուցանել զպէտս կարեաց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և ըստ կարողութեան Մերում մնուցանել զժողովուրդն Հայոց ի վայրի զալաբուջ և առ ջուրս հանդստեան։

Եւ արդ, Գոյեցեալ հայրապետական եւ յիսուսով, նաև դիմեմք առ Շնորհաշաւորդ եղբայրդ Մեր ի Քրիստոս սրբազան Կաթուղիկոսդ Տանն Կիլիկիոյ։ Լծակից եղբայր Մեր, տեսանեմք զտառապանս և զվիշտս հօտին հաւատացելոց ի Քեզ յերեսաց տգիտութեան, աղքատութեան և այլոց դատ հանգամանաց, որովք և Դուք տառապիք և հոգք անհնարինք ծանրանան ի վերայ Քեզ, վասնորոյ ազաչեմք զԱստուած լինել օգնական և զօրաւիդ Քեզ առ ի ամոքել զվիշտս և զտառապանս ժողովրդեան ի մխիթարութիւն Մերում, Քեզ և համօրէն ազգիս։

Սրբազնիմար մեր Գոյեցեալ Պատրիարքական աթոռոյ վանուցն սրբոց Յակովբեանց. տեղիդ, յորոյ վերայ կայք, սուրբ է և նուիրական, և աչք բաղմաց հաւատացելոց ի ձեզ հայեն։ Լերուք օրինակ բարեաց և քրիստոնէական ջերմեռանդութեան ամենայն ուխտաւորաց, զի հանդստեան յիշեսցեն պատկառանօք զսուրբ տեղիդ և զմիաբանութիւնդ զօրացեալ ի հաւատս քրիստոնէականս։

Ցուաւ կոնդակս յամի շնորհաց Փրկչին 1912, 29 սեպտեմբերի և ըստ տոմարիս ՌՃԺՌ. ի Հայրապետութեան մերում Ը. ամի յԸնթարատեան Մայր Աթոռս Ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ.

Սրբազնիմարդ Գ. Պօղոսեան, Գերապատիւ Գ. Գարեգին Սրբազան Գ. Գարեգին Սրբազան Գ. Գարեգին Սրբազան